ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հուլիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

106
(2772)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՈՒՆԵՑՎԱԾՔ Է ԴԻԶՈՒՄ

Նիկոլ Փաշինյանի հետ Գյումրիից քայլելով, գավազանը ձեռքին մինչեւ Երեւան հասած Արայիկ Հարությունյանը, պաշտոնից պաշտոն փոխելով, ի վերջո հանգրվանեց Փաշինյանի կողքին եւ այս տարիների ընթացքում ունեցվածք է դիզում:

Կրթության նախկին նախարարը 2021 թվականից Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարն է: Ու երբ 2018 թվականին ներկայացրել է հայտարարագիր՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար դառնալուց առաջ ունեցվածքի վերաբերյալ, նշել է, որ ստացել է 1 մլն 841 հազար դրամ տարեկան եկամուտ: Այժմ, երբ նա վարչապետի աշխատակազմի ղեկավարն է, տարեկան եկամուտները կազմել են 25 մլն 278 հազար դրամ: Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին, երբ դեռ որեւէ պաշտոն չուներ, ԵՊՀ դասախոս էր, Հարությունյանը 688 հազար դրամ է ստացել որպես աշխատանքի վարձատրության:

Հարությունյանը 2018 թվականին հայտարարագրել է մեկ բնակարան, սակայն դրանից հետո ներկայացված տարեկան հայտարարագրերում 2019-2021 թվականների համար Հարությունյանը գրել է, թե բնակարան չի ունեցել: 2014 թվականից «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կազմակերպության անդամ Արայիկ Հարությունյանը չի բացատրել, թե ուր է կորել իր բնակարանը: Փոխարենը արդեն 2022 թվականի հայտարարագրում գրել է, որ ձեռք է բերել հիպոթեքային վարկով բնակարան՝ 27 մլն 544 հազար դրամ արժողությամբ:

2022 թվականին Արայիկ Հարությունյանը նաեւ հողամաս է ձեռք բերել Կոտայքի մարզի Նաիրի համայնքում՝ վճարելով 8 մլն 320 հազար դրամ: Թե որքան է հողամասը եւ ինչ նպատակով, հակակոռուպցիոն կազմակերպության անդամը չի մանրամասնել:

Կասկածելի բաներ կան նաեւ Հարությունյանի ստացած եկամուտների մասով: Նրա հանձնած եւ վերադարձված փոխառությունները կազմել են 7 մլն 223 հազար դրամ «Ջերմուկ գրուպ» ՓԲԸ-ից: Դարձյալ պարզ չէ, թե ինչ է սա:

ՀՀ կրթության, գիտության նախկին նախարարի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 6 մլն 734 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 150 հազար դրամ:

Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 25 մլն 278 հազար դրամ, որից 3 մլն 068 հազար դրամը եկամտահարկի վերադարձի օրենքով ստացված գումարն է ՀՀ ֆինանսների նախարարությունից հիպոթեքի մայր գումարը մարելու համար:

Ինչպես տեսնում ենք, ՔՊ-ական պաշտոնյաները, իշխանության գալով, հողամասեր են ձեռք բերում մարզերում, մասնաբաժիններ են գնում կազմակերպություններից, տներ, իսկ Հայաստանում բարձրանում է աղքատության մակարդակը:

Ավելին՝նրանք հարստանում են, իսկ Արցախի քաղաքացիները սովամահ են լինում՝223 օր շրջափակված լինելով Արցախում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝դատական համակարգը նոր գործընթաց է սկսում. դատավորները պատրաստվում են կոչով հանդես գալ: Մասնավորապես, կամ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ դատավորներն իրենք ինքնակամ դիմում կգրեն եւ կհեռանան ԲԴԽ դատավորի պաշտոնից, կամ օրենքով դատավորները կլուծեն նրանց ազատման հարցը: Իսկ ինչի՞ց հետո է սկսվել այս կտրուկ իրավիճակը: Նախօրեին՝դատավորների ընդհանուր ժողովի ժամանակ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Մխիթար Պապոյանը դատավորների մոտ բարձրացրել է ԲԴԽ դատավոր անդամների հետ կանչելու հարցը եւ առաջարկել այն ընդգրկել ժողովի օրակարգում: Դատավորների ընդհանուր ժողովում ներկա 187 դատավորներից 180-ը կողմ է քվեարկել Մխիթար Պապոյանի առաջարկին: Այսինքն՝180 դատավոր փաստացի դժգոհություն է հայտնել ԲԴԽ դատավոր անդամների գործունեության մասով եւ պատրաստակամություն ցուցաբերել նրանց հետ կանչել եւ նոր ԲԴԽ անդամ դատավորներ ուղարկել Բարձրագույն դատական խորհուրդ: Դատավորները ցանկանում են իրենց ներկայացուցիչներին ունենալ ԲԴԽ-ում, որոնք ոչ թե Կարեն Անդրեասյանի կողքին կկանգնեն, այլ կպաշտպանեն դատավորներին եւ դատական անկախության շահերը: Իսկ ովքե՞ր են ԲԴԽ դատավոր անդամները. նրանք են՝Նաիրա Հովսեփյան, Քրիստինե Մկոյան, Արթուր Աթաբեկյան, Արշակ Վարդանյան, որը թերթեւս միակն է, որ կռիվ է տալիս դատական համակարգում: Ասել է թե՝դատավորներն այս օրերին վճռում են նրանց ճակատագիրը: Ի դեպ, անգամ դատական համակարգում հիշել են դատավոր Նաիրա Հովսեփյանի խոստումը: Բան այն է, որ նա ԲԴԽ անդամ ընտրվելուց առաջ կողմ է եղել դատավորների հետ կանչման պրոցեսին, սակայն հուլիսի 19-ին դատավորների ժողովում դեմ է քվեարկել այս գործընթացը սկսելու նախաձեռնությանը: Այսինքն՝ԲԴԽ է գնացել նպատակով, որ ոչ թե դատավորների շահերը պետք է ներկայացնի, տեր կանգնի դատական անկախությանը, այլ կդառնա գործադիր իշխանության կցորդը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ուշագրավ որոշում է կայացրել ՀՀ-ում լիազորությունները դադարեցված 7 դատավորների մասով՝նրանց բոլորի գործերը իրար միացնելու եւ մեկ վարույթում քննելու ձեւաչափով: Մասնավորապես, լիազորությունները դադարեցված 7 դատավորները՝Ռուբեն Վարդազարյանը, Ալեքսեյ Սոքոյանը, Զարուհի Նախշքարյանը, Աննա Փիլոսյանը, Սուրեն Անտոնյանը եւ Սիմա Ոսկանդարյանը, Ռաֆայել Մելքոնյանը, դիմել են ՄԻԵԴ՝բողոքելով, որ իրենց լիազորությունները դադարեցվել են իրավունքների կոպտագույն խախտումներով: Եւ, ահա, Եվրոպական դատարանը դատավորների գանգատը ընդունել է վարույթ, բոլոր դատավորների գործերը միացվել ու քննվելու են մեկ վարույթում: ՄԻԵԴ-ի այս որոշումը աննախադեպ է այն առումով, որ, ըստ էության, Եվրոպական դատարանը հասկացել է, որ կա խախտում, եւ առաջնահերթության սկզբունքով է քննելու լիազորությունները դադարեցրած դատավորների գործը: Սա ենթադրել է տալիս՝նոր «ապտակ» է սպասվում Բարձրագույն դատական խորհրդին: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ՄԻԵԴ-ը դատավորների դիմումը վարույթ ընդունելու եւ առաջնահերթությամբ 7 դատավորների հարցը մեկ վարույթում քննելու մասին անգամ տեղեկացրել է ԲԴԽ-ին: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ՝ տեղեկությունը պարզելու համար, սակայն ի պատասխան՝ԲԴԽ-ից հայտնեցին. «Մենք որեւէ բան ՄԻԵԴ-ից չենք ստացել եւ որեւէ գործառույթ չունենք նման հարցերը իրենց հետ քննարկելու»: Զարմանալի է, բայց ԲԴԽ-ն ակնհայտ ստում է, քանի որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում կա փաստաթուղթ, թե ինչպես է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը ՄԻԵԴ որոշման մասին գրություն ուղարկել եւ ԲԴԽ նախագահ Անդրեասյանին, եւ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին՝ ըստ էության պահանջելով բացատրություններ: ՄԻԵԴ-ի բացառիկ փաստաթուղթը ներկայացրել ենք ArmLur.am կայքում:

Պետական բյուջեի կատարումը շարունակում է շեղված մնալ պլանավորվածից, ինչն արտացոլվում է էապես բարձր հավելուրդների գրանցմամբ: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկացավ պաշտոնական աղբյուրներից: Նկատենք, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերն ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին ավելի քիչ են եղել, քան եկամուտները, ինչի արդյունքում ձեւավորվել է բյուջեի հավելուրդ՝շուրջ 100.7 մլրդ դրամի չափով՝նախորդ տարվա 46.3 մլրդ դրամ հավելուրդի եւ այս տարվա առաջին կիսամյակում ճշտված պլանով նախատեսված 119.1 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ընդ որում՝ծախսերի քիչ լինելը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի նվազմամբ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրներն ավելի են խորանում:

ԶՐՈՒՅՑ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԲԼՈԿԱԴԱՅԻ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

Արդեն մի քանի օր է՝ Արցախում մեկնարկած համաժողովրդական շարժումը ծավալվում է նաեւ Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ-ում Արցախի ներկայացուցչության եւ Արցախի կառավարության օպերատիվ շտաբի համակարգմամբ կազմակերպվեցին Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ իրազեկման ակցիաներ, որոնց ընթացքում նամակներ հանձնվեցին ՄԱԿ-ի գրասենյակի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ դաշտանատների ներկայացուցիչներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ «Ի աջակցություն Արցախի» ակցիայի մասնակցիները կփոխեն իրենց ծրագիրը: Մեր տեղեկություններով՝ նրանք որոշում են կայացրել այսօր երեկոյան անժամկետ նստացույց սկսել Մյասնիկյանի արձանի մոտ, եւ վրաններ են տեղադրել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Արցախի Ազգային Ժողովի «Արդարություն» կուսակցության պատգամավոր Դավիթ Գալստյանի հետ.

-Պարոն Գալստյան, Արցախում ինչպե՞ս է ընթանում Համաժողովրդական շարժումը, եւ ի՞նչ ակնկալիքներ ունեք շարժումից:

-Ես այդ շարժումը ավելի շատ կորակեի իշխանական շարժում, ոչ թե համաժողովրդական: Դա Արցախի իշխանությունների կազմակերպածն է, որը միտված է պայքարի իմիտացիա ստեղծելուն: Իսկ իրականում մենք տեսնում են, որ իրական մեղավորների անունները չեն նշվում, թե ում կատարած քայլերի պատճառով ենք այս իրավիճակում գտնվում: Իմ խորին համոզմամբ՝ մինչեւ չհնչեցվեն մեղավորների անունները, ապա մեր որեւէ շարժումը արդյունք չի ունենա:

-Իսկ ովքե՞ր են իրական մեղավորները, Դուք ո՞ւմ նկատի ունեք:

-Բլոկադայի մեջ հայտնվելու իրական մեղավորներն են Նիկոլ Փաշինյանը իր «բունտայով», իսկ այսօրվա պարենային պակասորդի, սովի մատնվելու մեղավորներն են Արայիկ Հարությունյանը իր իշխանությունների հետ միասին:

-Այսինքն՝ Դուք նկատի ունեք, որ այս շարժումը որեւէ արդյունք չի՞ ունենա:

-Քանի որ տեսնում ենք, որ այս շարժմանը իրական խնդիրներից ու պատճառներից չեն խոսում, այլ ընդամենը ասում են, որ մենք պատրաստակամ ենք, պարզ է, որ Արցախում բոլորն էլ պատրաստակամ են: Մենք տեսնում ենք, որ իրական պատճառները անտեսվում են, որի պատճառով մենք հայտնվեցինք այս վիճակում: Հայաստանի իշխանությունները փորձեցին հաճոյանալ թուրք-ադրբեջանական տանդեմին՝ ասելով, որ Արցախը ադրբեջանական տարածք է, եւ դրանից հետո Ադրբեջանը թույլ տվեց իրեն նման քայլեր իր տարածքում՝ Հայաստանի կողմից ճանաչված:

Եվ Արցախի կողմից համապատասխան ընդդիմություն չեղավ այդ արտահայտությանը, այլ ընդամենը կոչեր, դատապարտողական արտահայտություններ, թե մենք հավատարիմ ենք մեր ինքնորոշմանը: Բայց չեղավ, որ Նիկոլ Փաշինյանին կոնկրետ ասեն, որ նա, խախտելով Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի որոշումը, այն է՝ ՀՀ-ն չպետք է որեւէ ներքին կամ արտաքին փաստաթուղթ ստորագրի, որով կճանաչվի Արցախը Ադրբեջանի մաս, նրան չասացին, որ դու իրավունք չունես նման արտահայտություն անելու, եւ որ դա հակասահմանադրական է: Իմ կարծիքով՝ մինչեւ կոնկրետ մեղավորները չնշվեն, ոչ մի արդյունք չի ունենա, միազգային հանրությունն էլ հակադարձ փաստարկներ կբերի մեր դեմ, որ ընդհուպ Հայաստանի Հնարապետությունն է ասում, որ Արցախը Ադրբեջան է, եւ եթե Հայաստանը հայկական շահը չի պաշտպանում, ապա մենք ի՞նչ շահ պետք է ունենանք այդ երկրի ղեկավարներից:

-Պարոն Գալստյան, Հայաստանում եւս, ի աջակցություն արցախի, ակցիաներ են սկսվել, վաղվանից (այսօրվանից-խմբ.) նաեւ նստացույց է լինելու, վրաններ են ամրացնելու. այս մասով ի՞նչ կարծիք ունեք, սրանք որեւէ կերպ աջակցո՞ւմ են Արցախին:

-Նույն իրավիճակը Հայաստանում է: Ոչ ճիշտ քաղաքականություն վարելու արդյունքում մենք հայտնվել ենք այս իրավիճակում, եւ իշխանության կողմից կազմակերպված հանրահավաքները կամ ակցիաները փորձում են մեզ համոզել, որ սա քաղաքական չէ, այլ ժողովրդական: Բայց այս իրավիճակը ինչ-որ անձի սխալ քաղաքականության արդյունքն է, ինչպե՞ս կարող են այս ակցիաները քաղաքական չլինել:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՉԵՆ ՏՈՒԳԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադառնում է պատգամավորների ներկայացրած հայտարարագրերին՝ պարզելու համար, թե ովքեր էին նրանք եւ ովքեր են դարձել կառավարական համակարգ մուտք գործելուց հետո: Որոնման արդյունքում նկատեցինք, որ որոշ հայտարարատու անձինք սահմանված ժամկետում չեն ներկայացրել հայտարարագիր, ուշացրել են:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի հետ՝ պարզելու համար, թե ինչ վարույթ է հարուցվում, ու որքան են տուգանվում հայտարարատու անձինք այժմ:

«Հայտարարատու անձի ուշ ներկայացնելու համար չի պատասխանատվությունը, չներկայացնելու համար է: Ընդ որում՝ չներկայացնելն էլ անպայման կանոն ուն: Եթե հանձնաժողովը հայտնաբերեց, որ սուբյեկտը չի ներկայացրել հայտարարագիր, ծանուցեց եւ տվեց 30 օր, եթե այդ ընթացքում կրկին չներկայացվեց, նոր կտուգանվի: Բայց եթե, օրինակ, հանձնաժողովը ոչ մի տարբերակով այդ անձին չկարողացավ ծանուցել, անձը պատասխանատվության չի ենթարկվում: Օրինակ՝ եթե զգուշացվում է, եւ անձը մուտք է արել տվյալները, սակայն ինչ-որ խնդիրների պատճառով 30 օրում չհանձնեց, այս դեպքում էլ պատասխանատվություն չի առաջանում: Միայն այս դեպքի հետո սկսվում է վարչական վարույթ, որը տեւում է գրեթե 1-2 ամիս. եթե այդ ընթացքում էլ չի ներկայացնում, միեւնույնն է, մենք չենք տուգանում իրեն: Եթե ծայրահեղ է դեպքը, նոր միայն տույժ է սահմանվում: 2017 թվականին առաջին անգամ վարչական եւ քրեական պատասխանատվությունները ուժի մեջ է մտել, եւ եթե չեմ սխալվում, համակարգի այդ անպարտելիությունը սկսվել է կոտրվել 2018 թվականի ապրիլից հետո: Նախկինում, հոդված որպես էդպիսին չի եղել, իսկ ուժի մեջ մտնել է 2018 թվականից հետո»,- ասաց Հարությունյանը:

Հիշեցնենք նաեւ, որ 2022 թվականին Հայտարարագրերի վերլուծության վարչության պետ Կարեն Հակոբյանը հայտարարել էր, որ հայտարարագիր չներկայացրած անձինք նախ հեռախոսազանգի միջոցով լրացուցիչ տեղեկացվում են պարտականության մասին, դրանից հետո միայն Հանձնաժողովը գրավոր թղթային ծանուցում է ուղարկում, ըստ որի՝ 30-օրյա ժամկետում նրանք պարտավոր են ներկայացնել հայտարարագրերը: Սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում հարուցվում է վարույթ, կազմվում է վարչական իրավախախտման արձանագրություն, նշանակվում՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով:

Այսինքն՝ ներկայիս իշխանություններն ամեն ինչ անում են պատասխանատվությունից խուսափելու կամ այն շրջանցելու համար: Ներկայիս օրենքները գործում են միայն հասարակ քաղաքացիների կամ ընդդիմադիր պաշտոնյաների համար: Նոր ընդունված օրենքներն ունեն հազար կետ բացառություններ՝ հատուկ իշխանական պատգամավորների համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՐԿԻՆ ԿԳՈՐԾՈՒՂՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գեւորգյանը սեպտեմբերին ունի մի քանի գործուղումներ: Վերջինս սեպտեմբերի 17-20-ը Փարիզում մասնակցելու է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)՝ Հանուն առողջ միջավայրի կոնտակտային խորհրդարանականների ցանցի եւ Երեխաների հարցերով ենթահանձնաժողովի համատեղ նիստին, ԵԽԽՎ Սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստին:

Այդ նիստերից հետո՝ սեպտեմբերի 21-23-ին, նա նորից կգործուղվի Ստրասբուրգ՝ Ժողովրդավարության եւ կառավարման եվրոպական կոմիտեի կառավարման աշխատանքային խմբի նիստին մասնակցելու համար: Գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, ըստ փաստացի կատարած ծախսերը հավաստող փաստաթղթերի, իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Ազգային ժողովին հատկացված միջոցների հաշվին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ 2023 թվականի հոկտեմբերի 1-5-ը Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գեւորգյանը կգործուղվի Ստրասբուրգ՝Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Ժողովրդավարության եւ կառավարման եվրոպական կոմիտեի Կանաչ հանրային կառավարման աշխատանքային խմբի նիստին, ինչպես նաեւ Հանուն ժողովրդավարության համաշխարհային համաժողովի նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու համար:

Հիշեցնենք նաեւ, որ հուլիսի 3-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ղեկավարած պատվիրակությունը եռօրյա այցով մեկնել է Վարշավա՝ Լեհաստան: Պատվիրակության կազմում ընդգրկված էր նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանը, ում, սակայն, թույլ էին տվել օդանավ բարձրանալ, որովհետեւ ՍԷԿՏ-ը փակ է. երկրից դուրս գալու իրավունք չունի: Օդանավակայանում են իմացել այդ մասին, մինչդեռ ԱԺ-ն հոգացել էր նրա տոմսերի, հյուրանոցի եւ մյուս այլ ծախսերը: Գործուղումից մի քանի օր առաջ պատգամավորը հավաստիացրել էր աշխատակազմին, որ դատարանը թույլատրել է իր ելքը, որ այդ մասին իր փաստաբանն է իրեն փոխանցել:

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼՐՋԱՆՈՒՄ Է

«Արցախում ճգնաժամը ժամ առ ժամ լրջանում է: Այս իրավիճակը հաղթահարելու համար հստակ գործողություններ պետք է ձեռնարկվեն»,- Facebook-ի իր էջում գրել է Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը:

Նա նաեւ նշել է.

«1) Մարդասիրական օդային միջանցքի գործարկումն առաջնային նշանակություն ունի: ՄԱԿ-ի կամ միջազգային այլ կառույցների մարդասիրական առաքելությունները պետք է կարողանան ժամանել ուղիղ Ստեփանակերտ ու օգնություն տրամադրել:

2) Հնարավորինս շտապ Արցախ պետք է ուղարկվի ՄԱԿ-ի կամ այլ միջազգային կառուցի (ԵՏԽՎ, ԵՄ) փաստահավաք առաքելություն: Տեղում իրավիճակի անմիջական դիտարկումը թույլ կտա ավելի հստակ պատկերացում կազմել ճգնաժամի լրջության մասին:

3) Միջազգային միջնորդները՝ Վաշինգտոնից մինչեւ Փարիզ եւ Մոսկվա, պետք է ճնշում գործադրեն Ադրբեջանի վրա՝ փոփոխությունների հասնելու համար: Եթե նրանք դա չանեն, նրանց միջնորդական ջանքերն ապարդյուն կլինեն:

4) Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահների առաքելությունը պետք է ՄԱԿ միջազգային պաշտոնական մանդատ ստանա: ՄԱԿ-ը կարող է դիտարկել նաեւ Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ առաքելության ընդլայնման տարբերակներ, օրինակ՝ չինական խաղաղապահ կոնտինգենտի ներգրավմամբ:

5) Չափազանց կարեւոր է հասկանալ, որ որքան էլ բարձրաձայնում են ճգնաժամի հումանիտար կողմի մասին, բայց առկա խնդիրներն ունեն քաղաքական եւ պատմական հիմքեր: Հայերի դեմ պետական մակարդակով ատելության քարոզը Ալիեւի ավտորիտար վարչակարգի կարեւոր հիմնասյուներից է: Այս փաստն անտեսել հնարավոր չէ:

6) Աշխարհահռչակ ու ազդեցիկ հայերն ու մեր ժողովրդի օտարազգի բարեկամներն իրենց ակտիվությամբ մեծ դեր կարող են խաղալ Արցախում ծավալվող ողբերգության մասին բարձրաձայնելու հարցում:

Ընկերնե՛ր, օգնե՛ք Արցախի հայերի ձայնը լսելի դարձնել:

Միայն միահամուռ ուժերով ու կողք կողքի կանգնելով՝ կարող ենք այս պատմական բարդ փուլը հաղթահարել:

Արցախը հայկական աշխարհի անբաժան մասն է, այս հողը մեր գենետիկ կոդի բաղկացուցիչն է, ուստի այս պայքարը բոլորինս է»:

ՍԱԲՈՏԱԺ

ԻՆՉՈ՞Ւ Է ՔԱՂԱՔՆ ԱՂԲԻ ՄԵՋ

Հայկ Մարությանի հիմնած «Երեւանի աղբահանություն եվ սանիտարական մաքրում» հիմնարկը, կարծես թե, նույն սաբոտաժն է անում քաղաքային իշխանության հանդեպ, ինչպես «Սանիթեքը»՝ Մարությանի: Համենայնդեպս, մայրաքաղաքը աղբի մեջ ողողված է, եւ քաղաքային իշխանությունները փնտրում են մեղավորների:

Իսկ հիմա սկզբից. երբ 2018-ի սեպտեմբերին Հայկ Մարությանը նշանակվեց քաղաքապետ, Երեւանում աղբահանությունը ծայրահեղ վատթարացավ: Քաղաքն աղբի մեջ կորած էր ճիշտ այնպես, ինչպես այսօր: Մարությանը սկսեց «Սանիթեքից» ազատվելու պրոցես: «Ես թույլ չեմ տա, որ Երեւանն այլեւս առնչվի նման խնդրի: Ես այնպիսի համակարգ եմ կառուցում, որ ով էլ լինի քաղաքապետը, երբեւէ այս խնդիրը երեւանցիների հետ առնչություն չունենա»,- հպարտ հայտարարում էր Մարությանը:

Ապա խզեց «Սանիթեք» ընկերության հետ ունեցած պայմանագիրը, եւ ընկերությունը տուգանվեց յուրաքանչյուր չկատարված, վատ կատարված աշխատանքի, չմատուցված կամ թերի մատուցված ծառայության համար 12 մլն դրամի չափով: Իսկ «Սանիթեք» ՍՊԸ-ն հայտարարություն տարածեց, որտեղ նշված էր, որ ծառայությունների ոչ պատշաճ մատուցումը պայմանավորված է Երեւանի քաղաքապետարանի կողմից՝ պայմանագրով սահմանված վճարման պարտավորության խախտմամբ: Ընկերությունը պնդում էր, որ Երեւանի քաղաքապետարանը, ընդհանուր առմամբ, երկու պայմանագրերի շրջանակներում պակաս է վճարել ավելի քան 330 մլն դրամ: Ապա «Սանիթեք» ՍՊԸ-ն սկսեց միջազգային արբիտրաժային դատարան դիմելու գործընթաց: Այն ժամանակ երբ դեռ պայմանագիրը ուժի մեջ էր, «Սանիթեք» ընկերությունը նախազգուշացրեց, որ մայրաքաղաքի աղբահանության վիճակն ավելի է վատանալու, եւ սկսեց առահասարակ չկատարել պայմանագրային պարտավորությունները՝ քաղաքը թողնելով աղբի մեջ: Ի վերջո, «Սանիթեք»-ի հետ պայմանագրի խզումից հետո Մարությանը հիմնեց «Երեւանի աղբահանություն եվ սանիտարական մաքրում» հիմնարկը, որի ղեկավար նշանակեց իր մտերիմ ընկերոջը՝ Արմեն Գրիգորյանին: Նոր հիմնարկի համար բերվեցին բոլորովին նոր մեքենաներ, որոնց մեծ մասը՝ ատկատներով, «Կամազներ»՝ շինթույլտվության դիմաց, եւ այդպես պարկը համալրվեց տեխնիկաներով, որով աղբահանության խնդիրները համարեցին վերջնականապես լուծված: Սակայն հիմա՝ դեռ 4 տարի էլ չանցած, Հայկ Մարությանի ստեղծած հիմնարկը փաստացի չի աշխատում: «Երեւանի աղբահանություն եվ սանիտարական մաքրում» հիմնարկը, որի ղեկավարը այժմ Բագրատ Աղաջանյանն է, փորձում է քաղաքային իշխանությունների համար պրոբլեմներ սարքել: Ի դեպ, աղբահանության հիմնարկի նախկին տնօրեն Գրիգորյան Արմենի ձերբակալվելու հիմքերից մեկն էր հանդիսացել այն, որ նա սանմաքրման բաժնում ապօրինի կերպով գրանցել էր 4 աշխատակիցների, որոնք երբեւէ աշխատանքի չէին հաճախել, բայց ստացել էին մոտ 17.000.000 ՀՀ դրամ, եւ Բագրատ Եսայանը այդ ժամանակ հանդիսանում էր աշխատանքի չհաճախող աշխատակիցների անմիջական ղեկավարը, ով նախկինում հափշտակության համար դատապարտված է եղել:

Երեւանի անմխիթար վիճակի մասին հնչող հարցերին թե՛ քաղաքային իշխանությունները, եւ թե՛ «Երեւանի աղբահանություն եվ սանիտարական մաքրում» հիմնարկը պատասխանում են, որ խնդիրը տեխնիկական է. մեքենաները չեն գործում:

«Այս պահին մասնակի խնդիրներ ունենք տեխնիկայի առումով, մատոռներ կան փչացած, որոնց փորձում ենք հնարավորինս արագ լուծում տալ, իսկ թե քանի մեքենա են անսարք, չեմ կարող ասել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց հիմնակի աշխատակիցներից մեկը: Նկատենք, որ սա՝ այն դեպքում, երբ միայն բեռնատար մեքենաների սպասարկման համար մեկ տարում ծախսվել է մոտ 1մլրդ դրամ («Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է գնումների կայքը, որտեղ նշված է, որ ամեն եռամսյակը մեկ, իսկ որոշ դեպքերում երկու անգամ հատկացվել են 128-միլիոնական դրամներ): Բայց, չնայած ծախսված մոտ 2.5 մլն դոլարին, հիմա ունենք մի ամբողջ հիմնարկ՝ իր խոտանված մեքենաներով: Այս ամենին զուգահեռ, բազմաթիվ աշխատակիցներ ահազանգում են, որ «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» հիմնարկի տնօրեն Բագրատ Աղաջանյանի մեղմ ասած վատ վերաբերմունքի պատճառով (ծեծ, հայհոյանքներ, ստիպողաբար ավելի աշխատացնել եւ չվճարել եւ այլն) ազատման դիմումներ են գրում: Նույնիսկ կան աշխատակիցներ, որոնք ցանկանում են ազատման դիմումներ գրել, սակայն վախենալով, որ իրենց ծեծի կենթարկեն՝ ուղղակի աշխատանքի չեն հաճախում:

Փորձեցինք զրուցել Բագրատ Աղաջանյանի հետ, սակայն նա զբաղված էր, խոստացավ զանգահարել, բայց այդպես էլ չզանգեց մեզ: Չկարողացանք պարզել, թե այս բոլոր վարկածներից որն է իրականությանը առավել մոտ: Բայց պարզ է, որ այս ամենի արդյունքում կրկին տուժում են Երեւանն ու երեւանցին: Եւ ստացվում է, որ Երեւանի տարբեր իշխանությունների օրոք Երեւանում աղբահանության հարցը պատշաճ կազմակերպել չի հաջողվում: Անընդհատ խոսվում է տարբեր մեծ ծրագրերի, մետրոյի նոր կայարաններ, ճոպանուղի եւ նավահանգիստներ կառուցելու մասին, բայց Նիկոլ Փաշինյանի թիմին, 5 տարուց ավելի է, չի հաջողվում լուծել տարրական կենցաղային աղբի խնդիրը: 30 աստիճան շոգին երեւանցին գարշահոտ է շնչում:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՐՈՒԳՎԱՅՈՒՄ

Կառավարության երեկվա նիստի օրակարգում ընդգրկված էր Ուրուգվայի Արեւելյան Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանություն ստեղծելու հարցը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Հայաստանի եւ Ուրուգվայի միջեւ հարաբերությունները կրում են ջերմ, համագործակցային բնույթ: Դրանք ունեն նաեւ պատմական արմատներ, քանզի Ուրուգվայը առաջին երկիրն էր, որ 1965 թվականին պաշտոնապես ճանաչեց եւ դատապարտեց հայոց ցեղասպանությունը:

2019 թվականի օգոստոսից Երեւանում գործում է Ուրուգվայի դիվանագիտական ներկայացուցչությունը (գլխավոր հյուպատոսության, իսկ 2021 թվականի հոկտեմբերից՝ դեսպանության մակարդակով):

Արտաքին գործերի նախարարությունը 2023թ. իր բյուջետային հայտում ներկայացրել է Ուրուգվայում դեսպանություն բացելու եւ գործունեություն ծավալելու նախահաշիվ, որը ապահովվել է: Ստացվում է, որ 2023 թ. բյուջեում արդեն իսկ նախատեսված են Ուրուգվայում դեսպանություն բացելու համար անհրաժեշտ միջոցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱՄԱԿ ՉԻ ՍՏԱՑԵԼ

Երեկ ադրբեջանական լրատվամիջոցները լուր էին տարածել, թե Ադրբեջանի բնապահպանության եւ բնական պաշարների նախարարը նամակ է ուղարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարին՝ պահանջելով դադարեցնել Երասխում մետաղաձուլական գործարանի կառուցումը:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից տեղեկանում է, որ լուրն իրականությանը չի համապատասխանում:

«Շրջակա միջավայրի նախարարությունը՝ ի դեմս նախարար պարոն Հակոբ Սիմիդյանի, պաշտոնապես որեւէ գրություն չի ստացել»,- ասվում է հայտարարության մեջ:

ՆՍՏԱՅՈՒՅՑ ԿԱՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ «Ի աջակցութուն Արցախի» ակցիայի մասնակցիները վաղը կփոխեն իրենց ծրագիրը: Մեր տեղեկություններով՝նրանք որոշում են կայացրել այսօր երեկոյան անժամկետ նստացույց սկսել Մյասնիկյանի արձանի մոտ, վրաններ են տեղադրելու: Հիշեցնենք, որ երեկ՝ վաղ առավոտից, նրանք շարունակել էին իրենց ակցիան ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակի մոտ, ստորագրահավաք եւ նամակ հանձնել գրասենյակ:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՐՏՎԵՑ

ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԸ՝ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ

Ավարտվել է Տավուշի մարզի Աչաջուր գյուղի 84-ամյա բնակչի՝ ԱԺ նախկին պատգամավորի հոր առեւանգման եւ շորթում կատարելու դեմքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել եւ հիմնավորվել է, որ Ս. Մանուկյանը, Ա. Քամալյանը, Մ. Մուրադյանը, Թ. Պողոսյանը մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնություն են ձեռք բերել Աչաջուր գյուղի 84-ամյա բնակիչ Գ. Քոքոբելյանին առեւանգելու եւ շորթմամբ վերջինիս հարազատներից առանձնապես խոշոր չափերի՝ 3.000.000 ԱՄՆ դոլար պահանջելու շուրջ:

Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով 2022թ. հուլիսի 27-ին՝ վաղ առավոտյան, «Օպել» մակնիշի ավտոմեքենայով հիշյալ անձինք գնացել են Տավուշի մարզի Իջեւան համայնքի Աչաջուր բնակավայրի 1-ին փողոցում գտնվող տան մոտ, որտեղ դիմակավորված դարանակալել եւ սպասել են նշված տան 84-ամյա բնակչին: Ժամը 07:00-ի սահմաններում, երբ վերջինս դուրս է եկել իր տան բակից, ֆիզիկական ուժ գործադրելով՝ նրա կամքին հակառակ նստեցրել են նրան նշված ավտոմեքենան, փակել աչքերն ու բերանը եւ դուրս բերել գյուղից:

Կարճ ժամանակ անց տարեց տղամարդուն տեղափոխել են TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 մակնիշի ավտոմեքենա, տարել Լոռու մարզի Ծաթեր գյուղ եւ պահել նույն գյուղի բնակիչներից մեկից վարձակալած հյուրատանը, որտեղ Թ. Պողոսյանը եւ հանցավոր խմբի մեկ այլ անդամ հերթափոխով դիմակավորված, մինչեւ 2022թ. օգոստոսի 2-ը մշտապես գտնվելով նշված տանը, հսկել են տարեց տղամարդուն:

Շարունակելով իրենց հանցավոր մտադրությունը՝ հանցավոր խմբի անդամները 2022թ. հուլիսի 29-ին՝ ժամը 09:30-ին, տարեց տղամարդու ուրդուն՝ Խ. Քոքոբելյանին, WhatsApp հավելվածի միջոցով հաղորդագրություն են ուղարկել՝ պահանջելով 3 միլիոն դոլար գումար: Բացի այդ, նրանք բազմիցս վերջնագրեր են ներկայացրել ԱԺ նախկին պատգամավորին՝ սպառնալով, որ հաջորդը կլինի վերջինիս որդին:

Նշված գումարից 20.000 ԱՄՆ դոլարն իրենց կողմից նախապես ուղարկված կրիպտոարժույթի հաշվին ստանալուց հետո 2022թ. օգոստոսի 2-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Ս. Մանուկյանը Ա. Քամալյանի հետ իրենց մտերիմին պատկանող HYUNDAI SONATA 2.4 մակնիշի ավտոմեքենայով Երեւան քաղաքից ուղեւորվել եւ ժամը 14:00-ի սահմաններում ժամանել են Ծաթեր բնակավայր: Մինչեւ վերջիններիս տեղ հասնելը Թ. Պողոսյանը բամբակե եւ բինտե խծուծներով փակել է տարեց տղամարդու աչքերը, որից հետո վերջինիս տեղափոխել են հիշյալ ավտոմեքենան եւ հեռացել: Նույն օրը՝ ժամը 17:30-ի սահմաններում, Դիլիջան-Իջեւան ավտոճանապարհի անտառապատ գոտում հանցավոր խմբի անդամները տղամարդուն իջեցրել են ավտոմեքենայից, նստեցրել քարի վրա եւ հեռացել Իջեւան քաղաքի ուղղությամբ, որից հետո վերջինիս հարազատներին հաղորդագրությամբ հայտնել են նրա գտնվելու վայրը:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ հիշյալ 4 տղամարդկանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 258-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Ս.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, Ա.Քամալյանի նկատմամբ՝ տնային կալանքը: Մ.Մուրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը, իսկ Թ.Պողոսյանի նկատմամբ խափանման միջոց չի կիրառվել՝ վերջինիս՝ ազատազրկման մեջ գտնվելու պատճառով:

Հիշյալ 4 անձանց մասով նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ԻՆՉՈՒ՞ ՀԵՏԱՁԳՎԵՑ ԺՈՂՈՎԸ

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել էր, որ դատավորների ընդհանուր ժողովի օրակարգը չի հաստատվել, եւ նիստը հետաձգվել է:

Դատավորների ընդհանուր ժողովը հետաձգվել է, քանի որ դատավորները բարձրաձայնել են, որ Բարձրագույն դատական խորհուրդը դատավորներին սխալ է ծանուցել: Ստացվում է, որ նիստը հետաձգվեց, ու նոր ծանուցում կլինի, ինչը դատավորների կողմից նոր հարված էր ԲԴԽ-ին: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ դատավորներ ու ԲԴԽ կռիվը նոր փուլ է տեղափոխվում:

Հիշեցնենք, որ Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Բալայանն ընդդեմ Դատական դեպարտամենտի ղեկավարի հայց է ներկայացրել դատարան, պահանջում է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրության համար քվեաթերթիկում ներառելու ծանուցումը միայն մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորներին ուղարկելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչել եւ, որպես հետեւանք, Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրության համար քվեաթերթիկում ներառելու ծանուցում ուղարկել առաջին ատյանի դատարանների բոլոր այն դատավորներին, որոնք բավարարում են Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուի համար սահմանված պահանջները:

Նշենք, որ ԲԴԽ անդամ Մեսրոպ Մակյանի՝ հրաժարականի դիմում ներկայացնելուց հետո ԲԴԽ-ում դատավոր անդամի մեկ թափուր տեղ է առաջացել: ԲԴԽ-ի դատավոր անդամին ընտրում է Դատավորների ընդհանուր ժողովը: Երեկ նշանակված էր Ընդհանուր ժողով, որի օրակարգում ընդգրկված էր ԲԴԽ դատավոր անդամի ընտրության հարցը, սակայն դատական դեպարտամենտը խորհրդի անդամի ընտրության համար քվեաթերթիկում ներառելու ծանուցումն ուղարկել է միայն մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին. ժողովը չկայացավ:

ԿԱՑՆԱՀԱՐԵԼ Է

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Բյուրեղավանում 20-ամյա Կարենին կյանքից զրկած Միերը նախկինում մարդ է կացնահարել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնել է մահացած տղայի քույրը:

Մեզ հայտնի դարձավ, որ սպանված 20-ամյա Կարենը հերոսաբար կռվել է 2022 թվականի սեպտեմբերին, երբ հակառակորդը ներխուժել էր ՀՀ տարածք, ու մի կերպ է փրկվել մարտերում, իսկ, ահա, օրեր անց առողջական խնդիրներ ունեցող անձը նրան զրկեց կյանքից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Բյուրեղավանում սպանված 20-ամյա Կարենի քույրը՝ Սառան, որի անունը հարգելի պատճառերով փոփոխության է ենթարկվել, մեզ մանրամասներ հայտնեց ողբերգական դեպքից:

Ըստ Սառայի՝ իր եղբայրը երկու ընկերների հետ գարեջրատուն է գնացել, որտեղ մնացել են 1 ժամ: «Եղբայրս՝ Կարենը, անգամ հարբած չի եղել, ուղղակի Վարդավառ է եղել, ընկերներով գնացել էին գարեջրատուն, իսկ եղբորս բանակի քեֆը եղել էր 10 օր առաջ: Տաքսիստը եղել է եղբորս ընկերներից մեկի հորեղբոր տղան, որը նրանց տարել էր գարեջրատուն, եւ պայմանավորվել էին, որ նա էլ գնալու էր, նրանց կրկին գյուղ տաներ: Զանգահարել էին տաքսիստին, նա ասել էր, որ հիմա հարմար չէ՝ գա իրենց հետեւից: Իմ եղբայրն իր երկու ընկերների հետ որոշել են ոտ-ոտ իջնել, մինչեւ տաքսիստը կգա: Ճանապարհից իջնելիս նորից զանգահարում են տաքսիստին ու ասում են՝ բա ի՞նչ եղար, քեզ ենք սպասում, եւ այլ բան չի եղել», - պատմում է նա: Մեր հարցին՝ հայհոյանքներ չե՞ն հնչել տաքսիստի հասցեին, նա նշեց. «Սպանված Կարենի քույրը հայտնեց, որ տաքսու վարորդը եղել է Արթուրը: Տաքսու վարորդը եկել է տղաների հետեւից, եւ նրա հետ է եղել Միերը, որը հայտնի է նույն քաղաքում որպես հարբեցող, թմրանյութ օգտագործող: Երբ տաքսին կանգնել է, ու իմ եղբայրը երկու ընկերների հետ մոտեցել են՝ նստեն տաքսին, նույն րոպեին մեքենայից իջել է Միերը ու միանգամից կտրել է եղբորս պարանոցը ու հարվածել երկու երիտասարդներին, որոնք եղել են եղբորս հետ: Իսկ ինչ վերաբերում է Միեր կոչեցյալին, ապա ոստիկանությունում ցուցմունքներ կան, որ նա տարիներ առաջ մեկին կացնահարել է: Կրկնում եմ՝ իմ եղբայրը հարբած չի եղել, վիճաբանություն չի եղել, ամեն ինչ եղել է այդ Միերի պատճառով, որը եղել է աֆեկտի ազդեցության տակ»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 65 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԱՏ՝ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Իջեւան քաղաքի բնակիչ Նառա Ղազումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2006-2009թթ. ընթացքում աշխատելով «Ապավեն համայնքներին» բարեգործական հիմնադրամում որպես մարզային կազմակերպչի օգնական, ապա՝ կազմակերպիչ, ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ Արա Սիմոնյանի, Ստելլա Դավիդյանի եւ Ջեմմա Ֆրանգուլյանի օժանդակությամբ, չարաշահելով մի շարք քաղաքացիների վստահությունը, վերջիններիս նշված գործունեությունը դադարեցված բարեգործական հիմնադրամում բարձր վարձատրվող տարբեր աշխատանքների ընդունելու, թանկարժեք ավտոմեքենաներ եւ բնակարաններ հատկացնելու, շինություն վարձակալելու պատրվակով խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումարներ:

Ն. Ղազումյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Արա Սիմոնյանին, Ստելլա Դավիդյանին եւ Ջեմմա Ֆրանգուլյանին՝ քրեական օրենսգրքի 36-178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Ղազումյանը գտնվում է կալանքի տակ, մնացած 3-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Քրեական գործում խարդախության դրվագները բազմաթիվ են, դրանցից մեկով Ղազումյանը, ներկայանալով իբրեւ «Ապավեն համայնքներին» բարեգործական հիմնադրամի ղեկավար պաշտոնյա, իր ազգական Հակոբ Խոսրովյանին հայտնելով Արարատի մարզում գյուղատնտեսության ոլորտում հիմնադրամի կողմից իբր նախաձեռնվող մեծածավալ բարեգործական ծրագրի մասին, նրան առաջարկել է ներգրավվել հիմնադրամի աշխատանքներում, խոստացել է միջնորդել հիմնադրամի ղեկավարությանը նրան՝ որպես Արարատի մարզի համակարգող, իսկ նրա ընտանիքի անդամներին տարբեր այլ պաշտոնների նշանակելու, ինչպես նրան «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենա տրամադրելու հարցում: Ղազումյանը հիշյալ պատրվակներով 2018թ. հոկտեմբերից մինչեւ 2019թ.-ի փետրվարն ընկած ժամանակահատվածում Հակոբ Խոսրովյանից հափշտակել է 28.980.000 ՀՀ դրամին համարժեք 60 հազար ԱՄՆ դոլար: 2023թ. հունիսի 6-ին Սեւան քաղաքում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Դ. Սարգսյանը որոշել է քրեական գործի ընդդատությունը փոխել եւ գործն ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան:

Ղազումյանը, Տավուշի մարզի Չինչին համայնքում տարբեր ծրագրեր իրականացնելու կեղծ խոստումներ տալով, 2016թ. դեկտեմբերի 29-ից մինչեւ 2017-ի փետրվարի 20-ը Չինչին համայնքի ղեկավար Կարեն Դարբինյանից հափշտակել է 200 հազար դոլար: 2020թ. փետրվարի 7-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը Ղազումյանին մեղավոր է ճանաչել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, եւ դատապարտել 7 տարի ժամկետով ազատազրկման:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏՎՅԱԼՆԵՐ

ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ՝ ԱՌԱՆՑ ԾԱԽՍԻ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի ապրիլի 27-ին: Նախարարը հայտարարագիրը ներկայացրել է ուշացումով. ներկայացնելու վերջնաժամկետը մայիսի 31-ն էր, իսկ նա ներկայացրել է հունիսի 7-ին:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզաբանումների համար կապվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի հետ, եւ պարզվեց, որ նման դեպքերում ոչ մի տույժ եւ տուգանք չկա սահմանված:

Նախարարը ոչ մի անշարժ գույք չի ներկայացրել, սակայն հայտարարագրել է TOYOTA մակնիշի, 2008 թվականի արտադրության մեկ մեքենա, որը ձեռք է բերել 2011 թվականին: Խաչատրյանի բաժնային արժեթղթերը եւ այլ ներդրումները կազմել են 500 հազար դրամ է, որը նվիրատվություն է Վահան Հարությունյանից: Հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 4 մլն 580 հազար դրամ եւ 2 մլն 744 հազար դրամ, որոնք «Սիմարտեկ Ինտեգրեյթիդ Սոլյուշնս» ՓԲԸ-ից եւ «Սիմարտեկ» ՓԲԸ-ից են: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 3 մլն 060 հազար, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 4 մլն, 10 հազար եվրո եւ 30 հազար դոլար:

Նրա տարեկան եկամուտները կազմել են 24 մլն 680 հազար դրամ: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը, որը ներկայացնում է Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, հենց նույն նախարարությունից ստացել է 18 մլն 024 հազար դրամ աշխատանքի վարձատրություն, 6 մլն 513 հազար դրամը վարկ է «Կոնվերս» բանկից, իսկ 142 հազարը «Սիմարտեկ» ՓԲԸ-ից ստացված շահաբաժին է:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 6 մլն 513 հազար դրամ:

Ավելացնենք նաեւ, որ «Սիմարտեկ» ՓԲԸ-ն տնօրինում է նախարարի հայրը՝ Նորայր Խաչատրյանը, սակայն այս կազմակերպության բաժնետերեր համարվում են Գեւորգ Հարությունյանը՝ 50%, եւ Ռոբերտ Խաչատրյանը՝ 50% բաժնեմասով:

Խաչատրյանը նման եկամուտներ է ներկայացրել, սակայն ոչ մի ծախս չի հայտարարագրել:

Խաչատրյանի հետ նույն հասցեում գրանցված է 6 անձ, որոնք, լինելով նախարարի ընտանիքի անդամներ, հայտարարագիր չեն ներկայացրել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

2 ԵՐԹՈՒՂԻ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում սահմանափակվում է հասարակական տրանսպորտի շահագործումը. մայրաքաղաքի բնակչությանը կշարունակեն սպասարկել միայն ծայրամասային թաղամասերը սպասարկող երկու երթուղիները: Այս մասին հաղորդագրություն է տարածել Արցախի ներքին գործերի նախարարությունը:

«Հանրապետությունում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ վառելիքի սղության եւ հանրային տրանսպորտի բացակայության պատճառով մայրաքաղաքում, բացի երկու երթուղիներից, որոնք ծայրամասային թաղամասերն են սպասարկում, դադարեցված է հասարակական տրանսպորտի շահագործումը:

Այս օրերին մի խումբ քաղաքացիներ, այդ թվում՝ անչափահասներ, որպես այլընտրանքային միջոց օգտագործում են հեծանիվներ, մոպեդներ եւ կամ ինքնագլորներ:

Ճանապարհային ոստիկանությունը հորդորում է ծնողներին ուշադիր լինել երեխաների նկատմամբ եւ տրանսպորտի այլընտրանքային միջոցները կիրառել նախատեսված վայրերում՝ առանց վտանգելու սեփական կյանքը, բացառելու վթարների դեպքերը»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքն ապօրինի արգելափակելու հետեւանքով Արցախում հումանիտար իրավիճակը սրվում է ժամ առ ժամ: Գրեթե դատարկ են խանութները, կա սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների, այդ թվում՝ վառելիքի պակաս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃ

Հայաստանում գյուղատնտեսությունը պետք է արդիականանա: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը այս մասին շեշտեց կառավարության նիստում նախագծերից մեկի քննարկման շրջանակում, որը վերաբերում էր առաջիկա 3 տարում գյուղատնտեսության ոլորտի անելիքներին:

«Տնտեսական աճի ֆոնին գյուղատնտեսության ոլորտում մեր ցուցանիշներն առնվազն տպավորիչ չեն: Մենք երբեմն անկման գործընթաց ենք ունենում: Մենք այդ թեմայի մասին շատ ենք մտածել, քննարկել: Մեզ մոտ անկում է ապրում ավանդական գյուղատնտեսությունը, իսկ ժամանակակից ինտենսիվ գյուղատնտեսությունն աճ է ապրում, այդ թվում՝ կառավարության ծրագրերով»,-ասաց Փաշինյանը: Կառավարության աջակցության այդ ծրագրերը, ըստ նրա, իրենց կողմից ցանկալի մասշտաբներ չունեն, սակայն, մյուս կողմից, նկատում են, որ ինտենսիվ այգիների հիմնադրման, կաթիլային ոռոգման, խելացի անասնագոմերի կառուցման գործընթացը թեկուզ դժվարությամբ, բայց առաջ է գնում:

Վարչապետը նկատեց՝ հիմա մարզերում իսկապես հիմնվում են խելացի անասնագոմեր: «Գյուղատնտեսությունը պետք է արդիականանա»,-նշեց վարչապետը:

Վարչապետը նաեւ շեշտեց, որ Հայաստանում արտադրված սննդամթերքը պետք է որոշակի անվտանգային եւ որակական չափանիշների համապատասխանի: Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն էլ խոսեց «Գյուղատնտեսության մասին» օրենքի մշակումից: Նա կարեւորեց դա՝ օրենսդրական կարգավորումներով գյուղատնտեսական ոլորտը գրավիչ դարձնելու առումով:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԴԻՄՈՐԴՆԵՐ

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿԲԱՐՁՐԱՑՎԵՆ

Դիմորդների շրջանում ագրարային եւ մանկավարժական մասնագիտությունների նկատմամբ գրավչությունը ավելացնելու նպատակով առաջարկվում են փոփոխություններ: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բարձրագույն եւ հետբուհական մասնագիատական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյանը նշել է, որ նախ վերանայվելու է կրթաթոշակի չափը:

«Նախատեսում ենք կտրուկ բարձրացնել կրթաթոշակի չափը: Ներկայիս 5-6 հազար դրամի փոխարեն կսահմանվի 70-77 հազար դրամ: Կրթաթոշակ տրամադրվելու է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի սովորող ուսանողներին: Գերազանց սովորողները կստանան 10 տոկոս հավելավճար»,-ասաց Լուսինե Գրիգորյանը:

Նախարարության ներկայացուցիչը վստահ է, որ այս նախաձեռնությունը կնպաստի նշված մասնագիտությունների նկատմամբ գրավչության բարձրացմանը:

Նախագիծը շուտով կներկայացվի կառավարությանը: Այն հաստատվելուց հետո հավանական է, որ հենց այս ուսումնական տարվա սկզբից ագրարային եւ մանկավարժական մասնագիտություններով ընդունված ուսանողները ստանան բարձրացված կրթաթոշակ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նախատեսվում է նաեւ կատարել փոփոխություններ ընդունելության մեխանիզմների վերաբերյալ: Լուսինե Գրիգորյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկվում է այն հարցը, ըստ որի՝ ավագ դպրոցից, ինչպես նաեւ ագրարային ուղղվածության միջին մասնագիտական հաստատություններից Ագրարային համալսարան անցումը կապահովվի հեշտացված կարգով:

«Դիտարկվում են, միգուցե, առանց քննության ընդունվելու կամ մասնագիտական քննություն հանձնելու տարբերակները: Նախագիծը շուտով կդրվի հանրային քննարկման: Մեր կողմից քայլերը շարունավելու են ագրարային մասնագիտությունների գրավչությունը բարձրացնելու ուղղությամբ: Ագրարային համալսարանը վերջին տարիներին բավական աշխատանք է իրականացրել կրթական ծրագրերը, ենթակառուցվածքները բարելավելու ուղղությամբ: Կարծում եմ, որ պետք է ակտիվ աշխատանք տարվի հանրային իրազեկման ուղղությամբ, որ դիմորդները տեղեկանան համալսարանի գրավիչ մասնագիտությունների, շուկայի պահանջարկի վերաբերյալ»,- հավելեց նախարարության ներկայացուցիչը:

ԳՈՒՄԱՐ

43 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻՆ

Հայաստանում օգոստոսի 20-27-ը մի շարք ուժային կառույցների աշխատակիցների մասնակցությամբ բանակային խաղերի անցկացման համար կտրամադրվի 43 մլն դրամ, որից շուրջ 30 մլն դրամը մրցանակային ֆոնդն է: Համապատասխան նախագիծը կառավարության նիստում ներկայացրեց ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նախատեսված է, որ 2023թ. օգոստոսի 20-27-ը Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում եւ ՊՆ-ի մարզաբազաներում կանցկացվեն բանակային խաղեր՝ մի քանի կառույցների մասնակցությամբ: Բանակային խաղերին կմասնակցեն Պաշտպանության նախարարության, ԱԱԾ-ի, Ներքին գործերի նախարարության, Փրկարար ծառայության, Պետական պահպանության ծառայության, ՊԵԿ-ի, Քննչական կոմիտեի եւ Գլխավոր դատախազության աշխատակիցները՝ թե կանայք, թե տղամարդիկ: Յուրաքանչյուր կառույց կարող է ներկայացնել մեկական թիմ:

«Բանակային խաղերում ներառված են լինելու հետեւյալ մարզաձեւերը՝ բանակային քառամարտ, որն ընդգրկում է ձգումներ պտտաձողից, կանանց դեպքում՝ իրանի ծալում եւ տարածում, վազք՝ 100 մետր եւ 3000 մետր, կանանց համար՝ 1000 մետր, եւ նռնակի նետում նշանակետին մրցաձեւերը: Երկրորդ ձեւը ռազմականացված կրոսավազքն է, որը կիրականացվի թե՛ անհատական, թե՛ թիմային ձեւերով, այս պարագայում՝ արդեն փոխանցումավազքի ձեւով, ամեն կառույցից 3-ական մասնակցով: Լինելու է կողմնորոշում, որն իրականացվելու է որոշակի տեղանքի համար տրվող քարտեզով: Այնուհետեւ երեք տարբեր հրաձգության ձեւեր են՝ ինքնաձիգից, ատրճականից եւ հրացանից տարբեր դիրքերով»,-ասաց Անդրեասյանը:

Նախատեսվում է, որ առաջինից երրորդ տեղը զբաղեցրած մասնակիցները կպարգեւատրվեն հավաստագրերով, մեդալներով եւ դրամական պարգեւներով, առաջին տեղը գրաված թիմերը՝ գավաթներով: Առաջին տեղի համար նախատեսված է 1 մլն դրամ պարգեւ, երկրորդ տեղի համար՝ 500 հազար, իսկ երրորդ տեղի համար՝300 հազար դրամ: Փոխանցումավազքի մրցանակակիր թիմերը կպարգեւատրվեն համապատասխան գավաթով, իսկ յուրանքաչյուր մասնակից՝ մեդալներով, պատվոգրերով եւ դրամական պարգեւներով: Առաջին տեղի համար յուրաքանչյուր մասնակիցը կստանա 300 հազար դրամ, երկրորդ տեղի համար՝ 200 հազար, երրորդ տեղի համար՝150 հազար դրամ:

«Այս նախագծով մեր նախարարությանը հատկացված միջոցներից վերաբաշխում ենք իրականացնում բանակային խաղերի կազմակերպման եւ անցկացման նպատակով՝ 43 մլն դրամի չափով: Ընդ որում՝ սրանից 30 մլն դրամը մրցանակային ֆոնդն է»,-ասաց Անդրեասյանը՝ հավելելով, որ հայտերն ընդունվում են մինչեւ օգոստոսի 1-ը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շատ կարեւորեց այս միջոցառումը: «Կարեւոր եմ համարում, որ ծառայողների համար սոցիալական շփման որոշակի միջավայր ձեւավորվի: Շատ դեպքերում տեսնում ենք, որ այդ ծառայությունների մեջ ամենատարբեր հանգամանքների բերումով մարդիկ սոցիալականացման հարթակներ չունեն: Հաջորդ հանգամանքը մրցակցության ոգին եւ հմտությունների շարունակական զարգացման մի խթան ունենալն է»,-ասաց Փաշինյանը:

Ըստ վարչապետի՝ ուժային կառույցների փոխադարձ շփումը նաեւ այսպիսի հարթակներում էականորեն կավելացնի ծառայությունների փոխգործակցության որակը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀԵՐԻ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

Ակադեմիական քաղաք հիմնելու հայեցակարգը նախատեսվում է ընդունել ընթացիկ տարվա սեպտեմբերին: Այս մասին ասել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյանը:

«Հայեցակարգի հիմքում դրված է բուհերի խոշորացումը: Նախատեսված է ունենալ պետական ֆինանսավորմամբ մինչեւ 8 բուհ: Սահմանվել են հետեւյալ ուղղությունները՝ դասական համալսարան, բժշկական, արվեստի, կրթական, սպայական, տեխնոլոգիական ուղղությամբ համալսարաններ: Ակադեմիական քաղաքում կձեւավորվեն կլաստերներ՝ կրթական-սպայական, արվեստի եւ տեխնոլոգիական»,-ասաց Լուսինե Գրիգորյանը: Հայեցակարգում հստակ ժամանակացույց է սահմանվելու նախագծման, կառուցման, բուհերի տեղափոխման փուլերի վերաբերյալ: Ակնկալվում է, որ 2030 թվականին քաղաքը պատրաստ կլինի:

Այդ քաղաքում տեղակայվելու հնարավորություն է տրվելու նաեւ միջպետական համաձայնագրերով գործող մասնավոր բուհերին: Լինելու է շուրջ 44 հազար մարդու համար նախատեսված ակադեմիական քաղաք: Ակադեմիական քաղաքն ունենալու է բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, Երեւանից ապահովվելու են տրանսպորտային երթուղիներ: Աշխատանքներն իրականացնելու, համակարգելու համար ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը:

Ինչ վերաբերում է մարզերում գտնվող բուհերին, ապա Լուսինե Գրիգորյանը նշեց, որ դրանց ճակատագրի հարցը քննարկվում է:

Հայաստանի բուհերում ընդունելության համար այս տարի հատկացված 15 հազար 984 վճարովի տեղերից ընդունելություն իրականացվել է 7242-ի չափով, այսինքն՝ 45.3 տոկոսով:

«Այս տարի մեր դիմորդների թիվը 13 հազար 314 էր, որը համադրելի է նախորդ 2 տարիների թվի հետ: Ընդունվածների ընդհանուր թիվը 9147 է, ինչը կրկին համադրելի ցուցանիշ է նախորդ տարիների հետ: Անվճար տեղերի թիվը եղել է 2128, անվճար ընդունվել են 1782-ը, որը 83.7 տոկոսն է: Վճարովի տեղերը հատկացված են եղել 15 հազար 984-ի չափով, ընդունելությունն իրականացված է 7242-ի չափով: Սա, իհարկե, շատ ցածր ցուցանիշ է՝ 45.3 տոկոսը, եւ սա նորություն չէ»,-ասաց նախարարը՝ հավելելով, որ սա ներառում է եւ՛ պետական, եւ՛ ոչ պետական բուհերի ցուցանիշները:

Օրինակ՝ ոչ պետական բուհերի պարագայում հատկացված է եղել 3700-ից ավելի տեղ, ընդունելությունը եղել է շուրջ 3 տոկոս: Նախարարը նկատեց՝ ոչ պետական բուհերում գրեթե ընդունելություն չի իրականացվում:

Նա ներկայացրեց որոշ մտահոգիչ ցուցանիշներ եւս: Շատ ցածր ու մտահոգիչ է շարունակում մնալ ագրարային ուղղությամբ ընդունելությունը. Ագրարային համալսարանում հատկացված տեղերի ցուցանիշով ընդունելությունը կազմում է ընդամենը 7 տոկոս: Անդրեասյանը շատ մեծ աշխատանքի կարիք է տեսնում այս ուղղությամբ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

ԲՆՈՐՈՇ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ

Բարեարի ջանքերով վերականգնվել է ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի Քրդիկանց բնակավայրի Սբ. Աստվածածին եկեղեցին:



Վերականգնող ճարտարապետ Ամիրան Բադիշյանի կողմից դեռեւս նախորդ տարի ներկայացվել էր Սուրբ Աստվածածին եկեղեցու տարածքի բարեկարգման եւ զանգակատան իրականացման էսքիզային նախագիծը: Այն քննարկվել էր 2022 թ. օգոստոսի 23-ին կայացած ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդի 5-րդ նիստում եւ արժանացել հավանության: Դրանից հետո նախարարության հետ համաձայնեցվել է եկեղեցու վերականգնման աշխատանքային նախագիծը:

Եկեղեցու ներքին տարածությունը պատշաճ վիճակի բերելու համար իրականացվել է սրահի, դասի, ավանդատների եւ բեմի սալահատակ՝ կանոնավոր, տարբեր չափերի բազալտյա սալերով, խառը շարվածքով: Տեղադրվել է փայտյա քանդակազարդ նոր դուռ, եւ տեղադրվել է զանգաշտարակ՝ ժամանակաշրջանին եւ Սյունիքի տարածաշրջանին բնորոշ ճարտարապետական լուծումներով: Մաքրվել է հյուսիսային ճակատում լանջից քարաթափումների արդյունքում սողքերի տակ թաղված եւ անմխիթար, քայքայված վիճակում գտնվող տանիքը: Պեղումներն իրականացվել են հնագետի ուղեկցությամբ, որի ընթացքում բացվել են բնական ժայռերը՝ստեղծելով բնական միջավայր: Ապահովվել է նաեւ ներքին լուսավորության համակարգով:

Կառուցվել են նաեւ բազալտյա անտաշ քարերով հենապատեր՝ ընդօրինակելով շրջակայքում պահպանված տարբեր կառույցների պատերին բնորոշ շարվածքը, ստեղծելով երբեմնի գյուղական միջավայրին հարազատ իրավիճակ, եկեղեցու երեք կողմերում՝ աստիճանաձեւ շարվածքներ անտաշ եւ կոպտատաշ բազալտներով՝ զերծ մնալով քաղաքային կերպարի ստեղծումից: Եկեղեցու հարավային հարակից հարթակը սալարկվել է ճեղքած, անկանոն եզրագծերով բազալտյա քարերով (բուսածածկ կարաններով)՝ պահպանելով հողածածկույթի տակից բացահայտված պատաշարվածքների եւ թոնրի մնացորդները, բնական ժայռաքարերը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԸՆԴԴԵՄ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ

Բասկետբոլի տղաների Մ16 հավաքականը հուլիսի 19-ից 27-ը Կոսովոյի Պրիշտինա քաղաքում կմասնակցի Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի B ենթախմբի հանդիպումներին. հաղորդում է ՀԲՖ-ի կայքը:

Կոսովո են մեկնել հետեւյալ խաղացողները՝

1. Դավիթ Բոյաջյան
2. Արտյոմ Նազլուխանյան
3. Դավիթ Վարդանյան
4. Էդուարդ Խաչատրյան
5. Հայկ Ստամբոլցյան
6. Արեգ Ասլանյան
7. Քեւին Դեհբաշյան
8. Վիլյամ Ղարաբեկյան
9. Սեբաստիան Հացակորզյան
10. Նոլան Բրաուն
11. Արթուր Ավագյան
12. Սեբաստիան Ջոն Մինասյան
13. Ներսես Ավագյան

Հայաստանի հավաքականի մրցակիցները տվյալ ենթախմբում կլինեն Սան Մարինոյի, Ադրբեջանի, Կիպրոսի եւ Ալբանիայի թիմերը:

ՊԱՀՊԱՆԵԼ Է ԴԻՐՔԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը պահպանել է դիրքը ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝վարկանիշային նոր աղյուսակում Հայաստանի ընտրանին կրկին 90-րդն է, ինչպես նախորդ ամիս:

Դասակարգման աղյուսակի լավագույն տասնյակում նորից փոփոխություն չկա: Միմյանց հաջորդում են Արգենտինան, Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան, Բելգիան, Խորվաթիան, Նիդերլանդները, Իտալիան, Պորտուգալիան եւ Իսպանիան:

ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Կառավարությունը հուլիսի 20-ի նիստում վերաբաշխում կատարեց 2023 թվականի բյուջեի նախագծում եւ գումար հատկացրեց ԿԳՄՄՆ-ին նոյեմբերի 7-14-ը Երեւանում կայանալիք սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության կազմակերպման եւ անցկացման նպատակով:

Առաջնությանն ակնկալվում է շուրջ 80 երկրի 600 մասնակիցների մասնակցություն:

Երեւանում կայանալիք սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնությունը կազմակեպելու եւ անցկացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ ԿԳՄՄՆ հատկացնել 676,368.0 հազար դրամ, որից 196,548.0 հազար դրամը՝ ՀՀ ԿԳՄՄՆ ծրագրից վերաբաշխման արդյունքում 3-րդ եռամսյակում, եւ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ 479,820.0 հազար դրամը՝ 4-րդ եռամսյակում, անհրաժեշտ ապրանքներ եւ ծառայություններ ձեռք բերելու համար:

Միջոցառման ընդհանուր ծախսերը կկազմեն 976,692.0 հազար դրամ, որից 300,324.0 հազար դրամը կհոգա ֆեդերացիան՝հովանավորների աջակցությամբ:

2023 թվականի նոյեմբերի 7-14-ը Երեւանում կայանալիք սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության անցկացումը կնպաստի սամբո մարզաձեւի զարգացմանը, մասսայականացմանը, արդյունքների բարձրացմանը եւ մրցանակային տեղերի գրավմանը:

ԱՇԽԱՐՀ

Ո՞Վ Է ՍՊԱՆԵԼ

BBC-ն հայտնում է, որ Նեւադայի ոստիկանությունը հաստատել է, որ այս շաբաթ հետախուզում է իրականացրել ռեփեր Թուփակ Շաքուրի չբացահայտված սպանության գործով:

Հետախույզները խուզարկություն են իրականացրել Լաս Վեգասի ծայրամասերից մեկում՝ Հենդերսոնում, որտեղ Թուփակը գնդակահարվել է 1996 թվականի սեպտեմբերին:

Խոսնակ Ադեն Օկամպո Գոմեսը ասել է, որ չի կարող լրացուցիչ մանրամասներ հաղորդել գործի վերջին զարգացումների վերաբերյալ՝ վկայակոչելով բաց հետաքննությունը:

Նշենք, որ ռեփերը 25 տարեկան էր, երբ սպանվեց 1996 թվականի սեպտեմբերի 13-ին: Ձերբակալվածներ չկան, եւ կասկածյալները ներկայումս կալանքի տակ չեն:

ՄԱՆԲԱՄԱՄՆԵՐ՝ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՑ

Հուլիսի 21-ին Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում կկայանա ռեժիսոր, պրոդյուսեր Սեդրակ Գոջամանյանի եւ սցենարիստ Արմեն Վարդանյանի No Makeup ներկայացման պրեմիերան:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է դերասանուհի Ելենա Վարդանյանի հետ ներկայացման եւ իր կերպարի մասին:

Ելենա Վարդանյանն ասաց, որ իրադարձությունները կատարվում են հենց իր կերպարի տան շուրջ:

-Իմ կերպարը մի դերասանուհի է, որն իր ներկայացումից առաջ վթարի է ենթարկվում եւ հայտնվում է անվասայլակի վրա: Իրեն գալիս է խնամելու իր ուսանողուհին՝Մերին (Անի Պետրոսյանը):

-Արդյոք կամ ընդհանուր գծեր Ձեր եւ Ձեր կերպարի միջեւ:

-Ինձ թվում է՝ ցանկացած կերպարի մեջ մարդ կարող է տեսնել իրեն: Բայց այս կերպարին ինձ նմանացնում եմ միայն այն բանի համար, որ երեւի թե ներկայացումից առաջ որ ես էլ վրաերթի ենթարկվեի, նույն կերպ կանհանգստանայի: Կերպարը շատ բարի անձնավորություն է եւ սիրում է բոլոր այն մարդկանց, որոնք իր կողքին են եւ օգնում են իրեն:

-Ըստ Ձեզ՝ո՞րն է ներկայացման գլխավոր միտքը:

-Ներկայացման գլխավոր միտքն այն է, որ ցանկացած սուտ անգիտակցաբար բերում է հաջորդ ստին, եւ ստացվում է, որ դու խորտակվում ես այդ ստի մեջ եւ արդեն չես կարողանում հասկանալ, թե որտեղ է ճիշտը, որտեղ՝սուտը:

Դերասանուհին հավելեց, որ թիմի հետ աշխատում է առաջին անգամ, եւ բոլորն էլ շատ ուրախ եւ բարի մարդիկ են, որոնց հետ հաճելի է աշխատել:

Նշենք, որ ներկայացման դերասաններն են Ելենա Վարդանյանը, Անի Պետրոսյանը, Աննա Մանուչարյանը, Լիա Ջախարյանը, Ստեփան Ղամբարյանը, Աղաս Մանուկյանն ու Միեր Մխիթարյանը:

ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀԸ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

«Առնո Բաբաջանյան» համերգասրահում հուլիսի 22-ին՝ժամը 19:00-ին, կկայանա «Ջազ՝ երեխաների համար» խորագիրը կրող համերգը:

Նախագծի հեղինակներն են ջազմեններ Կարեն Գրիգորյանը եւ Ռաֆայել Պետրոսյանը: Ծրագրի նպատակն է վաղ հասակից երեխաներին ծանոթացնել ջազային երաժշտության հետ իրենց համար հասանելի եւ հետաքրքիր ձեւաչափով: Իսկ ինչը կարող է ավելի մատչելի լինել փոքրիկների համար, քան մուլտֆիլմը:

«Առնո Բաբաջանյան» համերգասրահի մեծ ու փոքրիկ այցելուները կլսեն իրենց սիրելի մուլտերի երաժշտությունը՝ ջազային մշակումով, փայլուն ջազ երաժիշտների կատարմամբ:

● *Հուլիսի 22-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չուչել (Խրտվիլակ)» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող ենք ստանալ ամուսնության վկայական:

Սոնա Հովեյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության վկայական ստանալու համար հարկավոր է դիմել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ (ԶԱԳՍ) տարածքային բաժին եւ ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

1. ամուսնացողների անձնագրերը եւ նրանց պատճենները,
2. ծննդյան վկայականները եւ նրանց պատճենները,
3. զինգրքույկը եւ պատճենը,
4. պետտուրիքի վճարված անդորրագիրը:

Այնուհետեւ ամուսնացողների կողմից լրացվում է ՔԿԱԳ բաժնի աշխատակցի կողմից տրված համապատասխան դիմումի ձեւը: Աշխատակցի կողմից (1 ամսվա ընթացքում) ստուգվում է դիմումի մեջ լրացված տվյալները եւ նշանակվում ներկայանալու օրը (զագսավորման օրը): Քաղաքացիները պարտավոր են ներկայանալ նշանակված օրը:

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Զագսավորման արարողությունից հետո ստանում են ամուսնության վկայական: Եթե քաղաքացիները ցանկանում են հանդիսավոր ամուսնություն, ապա նախօրոք պետք է տեղեկացնեն ՔԿԱԳ բաժնի պետին:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

ՀԱՐՑ. Ի՞նչ է պետք անել երկրաշարժի ցնցումների ժամանակ, ո՞րն է բնակարանի ամենաանվտանգ տեղը:

Քնարիկ Ջոհրաբյան (17 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե գտնվում եք բարձր հարկերում, պետք է կանգնել հիմնական կրող պատերից կազմված անկյուններում, դրանցում գտնվող դռան բացվածքներում, կրող սյուների մոտ, արտաքին պատերից եւ պատուհաններից հեռու:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ցնցումների ժամանակ գտնվում եք շենքի 1-3 հարկերում, պետք է արագ դուրս գալ շենքից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի Աջափնյակ վարչական շրջանը շարունակում է մնալ աղբի ու գարշահոտության մեջ: Օրեր շարունակ չեն դատարկվում աղբամանները, աղբը թափված է ամենուր, իսկ վարչական շրջանի ղեկավարը չի էլ մտածում լուծել աղբահանության խնդիրները: Ամբողջ վարչական շրջանով մեկ աղբակույտեր են, աղբամաններից աղբը դուրս է թափվում, այն էլ՝ տուրիստական այս թեժ շրջանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+4 + 10 +23 + 27
Կոտայքի լեռներ	+ 5 +10 +22 + 24
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28
Գեղարքունիք	+8 + 10 +16 + 20
Լոռի	+9 + 14 +20 + 24
Տավուշ	+14 + 18 +23 + 28
Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 +21 + 23
Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +25 + 29

Արարատ	+16 + 19 +32 + 34
Արմավիր	+12 + 14 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 8 +10 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+15 + 18 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+16 + 20 +24 + 28
Սյունիքի նախալեռներ	+8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+14 + 16 +31 + 33

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*